«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

ՀՀք.Երևան, Շիրակի 88/1
Հեռ. +374-41-777-983
Էլ. հասցե՝easm.himnark@gmail.com

«10» մարտի 2026թ.

«ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՐԹՈՒՐ ՓԻԼՈՅԱՆԻՆ
/ք. Երևան, Ագաթանգեղոսի 7, բն. 59/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
(Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին)

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի, ի դեմս տնօրեն Սաշա Կատվալյանի, որը գործում է «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) և «ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊ ընկերության, ի դեմս տնօրեն Արթուր Փիլոյանի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2025 թվականի դեկտեմբերի 29-ին կնքվել է հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/83-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր), որի 1.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի

33-րդ կետի 12-րդ ենթակետը և «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի և «ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊ ընկերության միջև 2025 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/83-1 ծածկագրով պայմանագրի 8.15 կետը՝ 12.02.2026 թվականին «ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊ ընկերության է ներկայացվել հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/83-1 ծածկագրով պայմանագրի համաձայնագրի նախագիծը, տեղեկացնելով, որ 29.12.2025 թվականին կնքված հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/83-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում հատկացվել է ֆինանսական միջոցներ, ուստի առաջարկվել է կնքել համաձայնագրերը և 15 աշխատանքային օրվա ընթացքում գրությամբ ներկայացնել «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ, միաժամանակ ներկայացնելով որակի և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Գրությամբ «ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊ ընկերությունը իրազեկվել է, որ սահմանված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում պայմանագիրը միակողմանի կլուծվի, այնինչ սահմանված ժամկետում Վաճառողը չի ստորագրել և Գնորդին չի ներկայացրել համաձայնագրերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»

Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի

«Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊ ընկերություն սահմանված ժամկետում չի ստորագրել և Գնորդին չի ներկայացրել Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող համաձայնագրերը, «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, հ. ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/83-1 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.15 կետի համաձայն՝ եթե սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ